ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«16» 08 2022 թ. N 466-Ա/4

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 87-Ա/4 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 23-րդ կետի 10-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի 2022 թվականի օգոստոսի 15-ի N /45.5/26876-2022 գրությունը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարի 2020 թվականի մարտի 12-ի «Քաղաքաշինության կոմիտեի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» N 87-Ա/4 հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ լրացումն ու փոփոխությունը:

1) Հրամանով հաստատված հավելվածի «28.2. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» բաժինը լրացնել նոր 16-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«16. Քաղաքաշինության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 65-28.2-Մ2-7)»:

2. Ուժը կորցրած ճանաչել Հրամանով հաստատված հավելվածի «28.2. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» բաժնի 13-րդ կետը.

1) «13. Քաղաքաշինության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության գնումների կազմակերպման բաժնի ավագ մասնագետ (ծածկագիր՝ 65-28.2-Մ4-3)»:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

16/08/2022

X

ԱՐԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Signed by: MKRTCHIAN ARAM 2707650080